ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.06.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/52

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Ղազարյանի (լիազորագիր, տրված՝ 03.06.2020թ.),

Հ. Քոյլոյանի (լիազորագիր, տրված՝ 03.06.2020թ.),

քննելով «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար խողովակների, փականների և նմանատիպ այլ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով գնանշման հարցման (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2020թ. ներկայացված (04.06.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/52 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«ՊՍՏՈ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումներն և պահանջը.</u>

«ՊՍՏՈ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 03.06.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը 06.04.2020 թվականին հայտարարել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացակարգ, իր կարիքների համար՝ խողովակների, փականների և նմանատիպ այլ պարագաների ձեռքբերման նպատակով:

Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով հաստատված պայմանագրի նախագծի 8.15 կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

Ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի նախագծի հավելված 1-ով սահմանված է, որ պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով ՀՀ կառավարության 04/05/17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերությամբ սահմանված պահանջները՝ ըստ Պատվիրատուի պահանջի:

Ընթացակարգի հրավերով հաստատված պայմանագրի նախագծի հավելված 1-ով սահմանված է, որ Պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և սույն ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս՝ Հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 30.04.2020 թվականին հրավիրված միաժամանակյա բանակցությունների արդյունքում «ՊՍՏՈ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) ընտրված մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 11; 12; 13; 14; 15; 27; 28; 29; 30; 39; 41; 42; 43; 44; 47; 48; 49; 51; 52; 53; 54; 55; 56; 57; 58; 59; 59; 60 և

61-րդ չափաբաժիններով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի 19.05.2020 թվականի ծանուցմամբ առաջարկվել է 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով:

Ընկերությունը 03.06.2020 թվականին ստորագրել և ներկայացրել է թիվ «ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան ստորագրված պայմանագիրը:

Բողոքի փաստական և իրավական հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Նույն օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր: Իսկ 4-րդ մասի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը,

ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Նույն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ գնման առարկայի բնութագիրը գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմաններն է:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում պետք է փաստել հետևյալը, որ Պատվիրատուի կողմից մասնակցին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ուղարկելու և նրա կողմից այն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում կարող է կողմերի համաձայնությամբ պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, իսկ գնման առարկայի բնութագրում ներառվում է նաև գնման առարկայի հատկանիշներ, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հրավերով սահմանված պայմանագրի նախագծով նշվել է, որ այն կնքվելու է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով, որն իր հերթին ենթադրում է վճարման ժամանակացույցի կնքման եղանակ և կարգ համաձայնագրերի միջոցով, ուստի նույնիսկ կողմերի համաձայնությամբ այն չի կարող փոփոխվել և պայմանագիրը պետք է կնքվի Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

Սույն դեպքում Պատվիրատուի կողմից 30.04.2020 թվականին հրավիրված բանակցությունների արդյունքում մասնակիցներից «ՊՍՏՈ» ՍՊԸ-ն ընտրված մասնակից է ճանաչվել Ընթացակարգի 11; 12; 13; 14; 15; 27; 28; 29; 30; 39; 41; 42; 43; 44; 47; 48; 49; 51; 52; 53; 54; 55; 56; 57; 58; 59; 59; 60 և 61-րդ չափաբաժիններով: Նշվածի արդյունքում պետք է հրավերի պահանջներին համապատասխան պայմանագիրը կնքվեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան, իսկ ֆինանսական միջոցների հատկացման դեպքում պետք է կնքվեր համաձայնագիր, որի հիման վրա պետք է մատակարարվեր ապրանքները, ժամանակացույցը լրացվելու և կնքվելու է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս՝ Հանձնման-ընդունման արձանագրության երկկողմ հաստատման օրվանից 30 օրացույցային օրվա ընթացքում: Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 19.05.2020 թվականի ծանուցմամբ պահանջեց Ընկերությունից 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագրի նախագիծը և ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով: Ներկայացված պայմանագիրը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան չէր կազմվել, իսկ Ընկերությունը որպես կողմ նախ չի տվել համաձայնություն հրավերով սահմանված պայմանագրի նախագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ, ավելին այն նույնիսկ համաձայնության դեպքում չէր կարող կատարվել, քանզի հանգեցնելու էր գնման առարկայի ձեռքբերման և վճարման պայմանների փոփոխության, ավելին հրավերով հաստատված պայմանագրի նախագծում պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքի տեսքով ներկայացնելու պահանջ նախատեսված չէ, իսկ հանձնաժողովի ոչ իրավաչափ վարքագիծը ստեղծում է խտրական մոտեցում ընկերության համար: Ընկերությունը մասնակցելով գնման ընթացակարգին և գնահատելով իր ռիսկերը առաջնորդվել է հրավերով նախատեսված պայմաններով և դրա միակողմանի ու չհիմնավորված փոփոխությունները ոչ իրավաչափ են, անհասկանալի է նաև Պատվիրատուի այն վարքագիծը, որ պայմանագրի և որակավորման ապահովումները բանկային երաշխիքով ներկայացնելու պահանջ հրավերով չի նախատեսել, սակայն 19.05.2020 թվականի ծանուցմամբ պահանջել է և ավելին ինչու հենց բանկային երաշխիքի տեսքով, չէ որ եթե ընդունենք մի պահ, որ ենթադրաբար Հանձնաժողովի պահանջը իրավաչափ է, ապա պայմանագրի և որակավորման ապահովումները կարող էր պահանջել բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի տեսքով: Նշված հանգամանքից նույնպես ակնհայտ է Հանձնաժողովի ոչ բարեխիղճ գործողությունները, որի արդյունքում Ընկերությունը հայտնվում է անելանելի դրության մեջ:

Բացի այդ նշեմ, որ Հանձնաժողովի կողմից ներկայացված պայմանագրի նախագծում առկա է նաև թվաբանական սխալ, ապրանքների մատակարարման արժեքը չէր համապատասխանում Ընկերության կողմից ընտրված մասնակից ճանաչվելու չափաբաժինների հանրագումարին:

Նշվածից բացի Ընկերության կողմից 03.06.2020 թվականին ստորագրվել և Պատվիրատուին է ներկայացվել համապատասխան պայմանագիրը հրավերի պահանջներին և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին թիվ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով ընթացակարգի

շրջանակում կնքելու հրավերի պահանջներին և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան պայմանագիր:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

2. <u>«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

«Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 04 հունիսի 2020թ. N ԲՔԱ-ԳՆ/1/8269-2020 գրության՝ հայտնում ենք, որ 06 ապրիլի 2020թ.-ին «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան, որի արդյունքում «ՊՍՏՈ» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես ընտրված մասնակից 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 27-րդ, 28-րդ, 29-րդ, 30-րդ, 39-րդ, 41-րդ, 42-րդ, 43-րդ, 44-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ, 52-րդ 53-րդ, 54-րդ, 55-րդ, 56-րդ, 57-րդ, 58-րդ, 59-րդ, 60-րդ և 61-րդ չափաբաժինների մասով: «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գնումների պլանի 14 մայիսի 2020թ. փոփոխության համաձայն՝ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի չափաբաժինների մասով նախատեսվել են ֆինանսկան միջոցներ, որը հրապարկվել է gnumner.am կայքում 15 մայիսի 2020թ-ին /հրապարակված լինելու փաստը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը կցվում է/: 19 մայիսի 2020թ.-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարը էլ. փոստի միջոցով «ՊՍՏՈ» ՍՊԸ-ին ծանուցել է և առաջարկել կնքել պայմանագիր համաձայն ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով գնանշման հարցման հրավերի ՄԱՍ 1-ի 9.4 և 10.4 կետերի պահանջներին համապատասխան: Սակայն հրավերով սահմանված ժամկետում 2020թ. հունիսի 03-ը ներառյալ «ՊՍՏՈ» ՍՊԸ-ն «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ չի ներկայացրել իր կողմից ստորագրված պայմանագրերը և ապահովումները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 15.06.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար խողովակների, փականների և նմանատիպ այլ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել են ***06.04.2020թ.***:

2. «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կարիքների համար խողովակների, փականների և նմանատիպ այլ պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակվել է ***06.04.2020թ.***:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի 03.06.2020թ. ներկայացված բողոքը, «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի գրությունը՝ կից փաստաթղթերով, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով *www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***գնումների պլանը***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթացի ընթացակարգի կազմակերպման նպատակով գնման պահանջի ծագման օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր սահմանվում են՝**

1) **պատասխանատու ստորաբաժանում,** և

2) գնումները համակարգող

3) գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույց:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա **գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝**

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը:...

3) **գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը՝ ըստ հանձնաժողովի կազմում այդ անձանց**

ընդգրկման առաջնահերթության՝ նշելով հանձնաժողովի նախագահի թեկնածությունը: …

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ **գնահատող հանձնաժողովի կազմավորմանը հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը հրավիրում է գնահատող հանձնաժողովի առաջին նիստը: Նիստի արդյունքում, գնման հայտի հիման վրա, հանձնաժողովը հաստատում է՝**

1) գնումների կամ նախաորակավորման հայտարարության տեքստը.

2) հրավերի տեքստը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 04.06.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/8269-2020 գրությամբ դիմել է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ին՝ խնդրելով տրամադրել «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.06.2020թ. թիվ 72/294ել գրությամբ տրամադրել է պահանջվող փաստաթուղթը:

Այսպիսով՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ գնումների պլանը, ինչպես նաև Ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվել են ***06.04.2020թ.***, այսինքն՝ նույն օրը, մինչդեռ վերոհիշյալ նորմերից բխում է, որ **պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման և գնումները համակարգողի համապատասխան իրավասություններն առաջանում են գնումների պլանի հրապարակման հաջորդող օրվանից, հետևաբար՝ Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը գնումների պլանը հրապարակելու օրը, այն է՝ 06.04.2020թ., դեռևս օժտված չի եղել գնման հայտը հաստատելու իրավասությամբ:**

Ինչպես նաև Կարգի 21-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ **Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանումը իրավասու չէր գնման պահանջի ծագման օրը կազմել գնահատող հանձնաժողովի կազմում ընդգրկելու նպատակով առաջադրվող անձանց (թեկնածուների) ցուցակը, որպիսի պայմաններում գնահատող**

<u>հանձնաժողովը, կազմավորվելու արդյունքում, Կարգի 31-րդ կետի համաձայն՝ իրավասու կլիներ հաստատելու գնումների հայտարարության և հրավերի տեքստը, իսկ գնումների համակարգողը իրավասու չէր իրականացնելու Կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները:</u>

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է ոչ իրավաչափ, որի արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 20-րդ, 21-րդ և 31-րդ կետերով սահմանված պահանջները, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգը պետք է հայտարարվի չկայացած:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգն ի սկզբանե կազմակերպվել է առանց իրավական հիմքի, ուստիև այն հայտարարվում է չկայացած, հետևաբար նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն որոշման շրջանակներում քննության առարկա չի դարձնում «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի կողմից բողոքով վիճարկվող պայմանագրի կնքման իրավաչափության հարցը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. «ՊՍՏՈ» ՍՊԸ-ի կողմից 03.06.2020թ. ներկայացված բողոքը մերժել:
2. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ ԿՇՄՊ-ԳՀԱՊՁԲ-20/25 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**